ՎԻԿՏՈՐՅԱ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ» ԵՐԿՈՒՄ

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ը ընդգրկում է 952 թվականից մինչև 1137 թվականն ընկած շուրջ 185 տարիների դեպքերով եւ իրադարձություններով հարուստ պատմությունը, եւ որքան մեծ է գրքի պատմական արժեքը, նույնքան հետաքրքրական եւ ուշադրության արժանի է լեզվական տեսակետից, որը ներկայացնելու համար անհրաժեշտաբար պետք է նկատի առնվեն *հայերենի զարգացման ընթացքը, գործող լեզվական տարբերակները, գործառության ոլորտները* եւ լեզվի գործադրման հարցում տվյալ հեղինակի դրսեւորած ինքնատիպության մակարդակն ու աստիճանը:

Ուռհայեցու երկի լեզվի ուսումնասիրության հարցում մեզ համար ելակետային եւ սկզբունքային ուղենիշ է ակադեմ. Գեւորգ Ջահուկյանի կատարած հայոց լեզվի պատմության չափազանց խոր եւ գիտական շրջանաբաժանումը[1]: Ըստ այդ շրջանաբաժանման՝ Ուռհայեցու երկը առնչվում է հին եւ միջին շրջանների նախամիջին (Ը-ԺԱ դդ.) եւ Կիլիկյան նորմավորման (ԺԲ-ԺԴ դդ.) ենթաշրջաններին, այսինքն՝ երկու շրջանների անցումային հատվածի գործ է՝ կապված գրաբարի եւ միջին հայերենի, ինչու չէ, նաեւ աշխարհաբարի հետ:

Ուրեմն՝ լեզվի բոլոր բաժինների մակարդակային քննություն կատարելիս ելակետում նշված ենթաշրջանների լեզվական տարբերակներն են, հնչյունական, բառապաշարային, քերականական իրողությունները, որոնց հիման վրա արժեւորվում է քննվող երկը՝ իբրեւ ԺԱ դարավերջի եւ հաջորդ դարասկզբի ինքնատիպ ստեղծագործություն:

Ուռհայեցու «Ժամանակագրութեան» լեզուն գրաբարն է, բայց այն դասական շրջանի գրաբարը չէ, որովհետեւ 6-11-րդ դարերի ընթացքում փոփոխություններ են կրել եւ՛ գրաբարը՝ որպես գրական լեզու, եւ՛ նրա խոսակցական հիմքը: «Նախամիջին ենթաշրջանում (VIII-XI դարեր),- գրում է Գ.Ջահուկյանը,- *Էլ ավելի է խորանում գրական եւ խոսակցական լեզուների տարբերությունը»* (ընդգծ.- ՎՌ)[2] : 12-16-րդ դարերի լեզու միջին հայերենն է, որ գործում է իբրեւ գրական լեզու, սակայն գրաբարը եւս մնում է որպես լեզվական տարբերակ՝ գործառության իր ոլորտներով: Այդ շրջանում «շարունակում է իբրեւ գրական լեզու գործել նաեւ գրաբարը… *իբրեւ եկեղեցական-կրոնական արարողությունների ու գրքերի, պատմական որոշ աշխատությունների, փիլիսոփայական-տրամաբանական երկերի լեզու»* (ընդգծ.-ՎՌ)[3]: Այդ շրջանի գրաբարը միատարր չէ. նրանում, ինչպես ընդգծում է Գ.Ջահուկյանը, նկատելի է երկու շերտ՝ 1)խրթին, հին նորմերին հետեւող, հունաբանությանը տուրք տվող, 2)*համեմատաբար պարզ գրաբար, որ պարունա-*

1 Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան,** Հայոց լեզվի զարգացումը եւ կառուցվածքը, Եր., 1969, էջ 6-68:
2 **Գ. Բ. Ջահուկյան,** նշվ. աշխ., էջ 43:
3 Անդ, էջ 45:

կում է կենդանի- խոսակցական լեզվի որոշ տարրեր, եւ որտեղ ավելի շատ են խախտվում գրաբարի հին նորմերը (ընդգծ.- ՎՌ)[4]:

Մեր կարծիքով Ուռհայեցու «Ժամանակագրութեան» լեզուն նշված երկու շերտերից երկրորդին է պատկանում. պարզ է ու հստակ, ունի բանավոր-խոսակցական եւ բարբառային տարրեր, զերծ չէ գրաբարի հին նորմերի խախտումներից:

Անցնենք բուն նյութի քննարկմանը, այն է՝ դերբայների գործածությանը «Ժամանակագրութիւն» երկում[5]: Գրաբարի դերբայներն են՝ *անորոշ, անցյալ, ապառնի, ենթակայական,* որոնք բառաքերականական հատկանիշներով տարբեր են. միմյանց հակադրվում են անկախ եւ կախյալ կիրառություններով, տարբերվում են նաեւ գործածության հաճախականությամբ:

Անորոշ դերբայ. Դիտարկում ***առաջին:***

Որպես բայերի սկզբնաձեւ՝ ունի *ել* (*է* եւ *ի* խոնարհումների համար), *ալ, ուլ* դերբայական վերջավորությունները, գործածվում է նաեւ գ*ոլ* բայը, որի *ոլ* վերջավորության *ո* ձայնավորը ձուլվել է արմատի *ո* ձայնավորի հետ: Հայտնի է, որ հետդասական գրաբարում սկսել է գործածվել նաեւ *իլ* վերջավորությունը, որ դասական ենթաշրջանում գրեթե գործածական չէր, հետդասական ենթաշրջանում ի հայտ է գալիս, ապա հաջորդ երկու ենթաշրջաններում լայն տարածում է ձեռք բերում, որը կենդանի-խոսակցական լեզվի ազդեցության արդյունք է եւ լեզվի պատմության ու պատմական բարբառագիտության համար՝ արժեքավոր իրողություն:

Ուռհայեցու գրքում բազմաթիվ օրինակներ են հանդիպում, որոնց մեջ կան եւ՛ *է* խոնարհման, եւ՛ *ի* խոնարհման, եւ՛ ներգործական, կրավորական, չեզոք սեռերի իմաստներով բայեր, որի համար այդպիսի բայերը տրվում են ոչ թե սոսկ թվարկումով, այլ նախադասությունների մեջ, որից երեւում են նաեւ դրանց կիրառության ոլորտները՝ անկա՞խ են, թե՞ բաղադրյալ կառույցներում (բաղադրյալ ստորոգյալ, նախդրավոր կամ նախադրությամբ կառույցներ եւ այլն):

Օրինակ՝ 1.Աղաչեաց զմեզ *չանկանիլ* ի գերութիւն (26): 2.Եւ յառաջ քեզ *գիտանիլն* մեր ի Տրապօլիս հեծելազօրս առաքեաց զԹ-իմացիսն եւ զՏալիամատացիսն (30): 3.Նախ քան *զնուագիլ* լուսոյն եղեւ գոջիւն եւ թնդիւն ահաւոր (60): 4.Առաւել վիրաւորելոց է Տէր Յիսուս Քրիստոս ի յանարժան քահանայիցն քան *զչարչարիլն* եւ *զիսաչիլն* ի Հրէից (62): 5.«Ով թագաւոր, հայրապետական աթոռ է, եւ ոչ ոք է արժանի ի սմա *նստիլ,* բայց միայն Տէր Պետրոս» (114): 6. Եւ յայնժամ սկսան զօրք այլազգեացն ի գիշերին *պատերազմիլ,* եւ հասանէր ձայն պատերազմին առ Լիպարիտն (116): 7.Եւ եղեւ *ի հանդիպիլ* Պաղտոյնին եւ Ճօսլին զօրացն Թուրքին (322): 8.Արդ ահա այսմ ամենայնի պարտ է *կապարիլ* եւ լինել (314). *ամենայնի* տրականով ենթակա է: 9.Եւ սկսան ի հացէ քաղցնուլ եւ *վրանգիլ* (340): 10.Եւ արարածք յանձն առին *կործանիլ* յահէ զօրութեանց Տեառն (362): 11.Հրամայեաց հինգօրեայ պահօքն զգաստանալ նախ քան *մկրտիլն* (192): 12.*Զմեռանիլն* խնդրէին՝ քան թէ *մատնիլ* ի ձեռս անօրինաց (402):

---

4 Հմմտ. անդ:

5 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն (աշխարհաբար թարգմանությունը եւ անոթագրությունները Հրաչ Բարթիկյանի), Եր., 1991: Բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում:

Երկրորդ: Անորոշ դերբայը հոլովվում է *ո* հոլովիչով, միայն եզակի թվով՝ դրսևորելով բազմաթիվ գործառություններ, որոնք բնույթով անկախ կիրառություններ են: Սակայն, ըստ էության, երկու դեպքում էլ գործում են *հարաբերական անկախ կիրառություններ*՝ 1) երբ նախդրավոր կամ նախադրություններով կառույցներում անորոշ դերբայը այդ սպասարկու բառերի խնդիրն է, 2) երբ անորոշը միադիմի եւ եղանակիչ բայերով կազմված բաղադրյալ ստորոգյալի մաս է կամ պատճառական կազմության բաղադրիչ:

Նախդրավոր կառույցները ձեւավորված են *ի* նախդրով եւ անորոշ դերբայի հայցական հոլովով, որտեղ նախդիրն արտահայտում է ժամանակի իմաստ: Ուռհայեցու երկի հատվածները վերնագրեր չունեն. երբ սկսում է պատմել նոր դեպքերի եւ իրադարձությունների մասին, դրանց փոխարեն նշում է տարեթիվը, ժամանակը՝ *ի* նախդրով կառույցներով, որոնք պարբերաբար գործածված են ամբողջ երկի մեջ:

Օրինակ՝ 1. Իսկ *ի վերանալ թուականութեանս* Հայոց ի ԴՃԻ մեռանէր Գագիկ արքայն խաղաղական մահուամբ (12)՝ Հայոց 420 թվականի սկզբին բնական մահով վախճանվեց Գագիկ թագավորը: 2. Իսկ *ի բարձրանալ թուականութեանս Հայոց* ՆՂԲ թագաւորեաց ի վերայ Հոռոմոցն Մոնոմախն, որ ասէին անուն Կոստանդին (102) *«հայոց թագավորությունը բարձրանալիս»*, այսինքն՝ 492 թվականի սկզբին: 3.Իսկ *ի գալ հասանել թուականութեանն Հայոց* ի յամս ՇՇԹ· կոմսն Ուռհայոյ կամեցաւ երկրորդ պատերազմ յարուցանել ի վերայ Տանգրէի (340) *«երբ հայոց թագավորությունը եկավ հասավ 559-ի տարիներին»*, այսինքն՝ 559 թվականի սկզբին…

Բացի վերնագրերին փոխարինող այսպիսի կիրառություններից, երկում հաճախ են հանդիպում *ի+ անորոշի հայցական* կառույցները՝ ժամանակի իմաստով: Օրինակ՝ 1. Եւ *ի հարցանելն նոցա*, նա դառն ոգով եւ աղիողորմ հառաչանօք եւ պատասխանի (60): 2. Եւ *ի հասանելն մեծի աւուր* մկրտութեան Տեառն մերոյ մեծարեաց թագաւորն զՏէր Պետրոսն եւ զվարդապետն Հայոց (56): 3. *Ի բազմանալ* անօրէնութեանցն, խափանին փօխախմբութիւնք սրբոցն (80): 4. Եւ *ի սասպկանալ պատերազմին*՝ Ուզն եւ Պաճինակն ի սուլտանի կողմն անցանէին (218): 5. Եւ *ի ծագել արեգականն* յարեւաւ եւ հեղեղն յարեւմտից կողմանէ (318): 6. Եւ *ի բազմանալ պատերազմին* յաղթեաց Տանգրի զօրացն Պաղտրունին (336): 7. Եւ *ի լուսանալ միւս այլ աւուրն* կազմեաց միաբան ի գործ պատերազմին (342): 8. Իսկ *ի լուսանալ առաւոտուն* եկանէին ի փատէ բերդացիքն (348): 9. Եւ *ի գալն առաւոտուն* գիեր գնաց Թուրքին (380): 10. Եւ *ի խմբել պատերազմին* զամենայն զօրսն Թուրքաց դարձուցանէին ի փախուստ (382): Անորոշի նախդրավոր հայցականը արտահայտում է նպատակի իմաստ, բացառականը՝ պատճառի. *ի* նախդրին կարող է նախորդել եւ *առ* նախդիրը: Օրինակ՝ 1.Եւ հրամայեաց թագաւորն Ալեքս կիր խառնել ի հացն եւ տալ զայն *յուրել* նոցա (308): 2.Եւ բազում զօրօք հասանէին յաշխարհն Հայոց *առ ի պատերազմել* ընդ զօրսն Պարսից (112): 3.Թագաւորն Երուսաղէմայ ամենայն զօրօքն Փռանգաց հասանէր յԱզազն *առ ի պատերազմիլ* ընդ զօրսն Թուրքաց (380): 4.«Որդեակք, զսուրբսն եւ զառաքինիսն վիրաւորեն եւ զանարատն դարձուցանեն ի քահանայութենէ *առ ի չունելոյ* արծաթ, ոչ տան զձեռնադրութիւն» (80). այստեղ պատճառի իմաստով է:

Եղանակիչ եւ միադիմի բայերին հարադրվելով՝ անորոշ դերբայը դառնում է բայական բաղադրյալ ստորոգյալի մաս, որի դեպքում ամբողջությամբ անկախ չէ. հարաբերականորեն անկախ դիրքում է:

Օրինակ՝ 1. Զիա՞րդ *կարես ածել* զնա առաջի իմ (14): 2. Որ եւ զիրերաց մահ *ոչ կարացին տեսանել* (18): 3. Եւ անտի *կամեցաք* ի Սիդովն *անցանել* (30): 4. *Ոչ իշխեաց եւանել* Ամիր-ըլ-մումնի ի Բաբելոնէ ընդդէմ մեր եւ կամ հեծեալս *արձակել* յիւր զօրացն յօգնութիւն (և.տ.): 5. Իսկ սպասաւորք թագաւորին *ջանային առնուլ,* եւ նա ուժգին ոչ տայր (114): 6. Յայնժամ *սկսան* զօրք այլազգեացն ի գիշերին *պատերազմիլ* (116): 7. Եւ *սկսան* ի հացէ *քաղցնուլ* եւ *վտանգիլ* (340): 8. Եւ *ոչ համարձակեցան անցանել* յիրեար (360): 9. *Ոչ* որ *է արժանի* ի սմա *նստիլ* (114): 10. Եւ արդ ահա այսմ ամենայնի *պարտ է կատարիլ* եւ *լինել* (314)՝ Եւ այժմ ահա այս ամենը պետք է կատարվի եւ լինի՝ պետք է տեղի ունենա: 11. Եւ ասէր Լիպարիտն՝ եթէ «Շաբաթ է, եւ *ոչ է օրէն* Վրացեացս *եւանել* յաւուր շաբաթու ի պատերազմ» (116)՝ Եւ Լիպարիտն ասում է, թե. «Շաբաթ է, վայել չէ՝ հարմար չէ (ընդունված չէ), որ շաբաթ օրը վրացիները պատերազմի դուրս գան»: Վերջին երկու օրինակներում ենթակաները դրված են տրական հոլովով (այսմ *ամենայնի, Վրացեացս* < Վրացիք). այսպիսի կառույցները Ե դարի հեղինակների գործերում տարածում ունեն, մինչդեռ Ուռհայեցու երկում խիստ սահմանափակ կիրառություններ են հանդիպում:

Երրորդ: Հարաբերականորեն անկախ դիրքով ձեւավորում է ոճական արտահայտություններ, հարադրական բայեր, դարձվածքներ եւ պատճառական կազմություններ: Հարադրական բայերը կազմվում են անուն խոսքի մասերով եւ որոշ բայերի անորոշ դերբայով. *առնել* (=անել, կատարել, ստեղծել, դարձնել) բայով հարադրական ձեւերը քննվող երկում անսահման շատ են եւ գերազանցապես գործածված են դիմավոր ձեւերով, որոնց մասին կխոսվի առանձին: Ոճական արտահայտությունները եւ դարձվածքները լայն տարածում չունեն, պատճառական կազմությունները չափավոր կիրառություն ունեն:

Օրինակ՝ 1.Եւ բազում *կսկիծ լալոյ* եւ աղէտ թախանձանաց եղեւ յՈւռհա (322). ընդգծված կապակցությունը *լալ* անորոշ դերբայի սեռական հոլովով կազմված ոճական արտահայտություն է, թարգմանելիս հոլովական իմաստը չի պահպանվում, գերադաս բաղադրիչը *կսկիծ* բառն է, եւ կարելի է թարգմանել՝ ա)*կսկիծը* կամ *լացը,* բ)*կսկիծն ու լացը,* գ)*ողբը* կամ *սուգը* (*աղէտ թախանձանաց* նույնպես ոճական արտահայտություն է՝ կազմված *թախանձանք* անեզական գոյականի սեռական հոլովով): 2.*Որոճալով որոճեն* զերգն դիւական (80). անորոշը իմաստի սաստկացում է հաղորդում: Այդպես էլ՝ Զի ժամանակս *գնալով գնայր* (306): 3. Զի *ունի պատերազմել* ընդ սուրբն (80): 4.*Առաւել ունիմ ասել* զայս (և.տ.): 5.Զհոգեւորն *ի բաց դայր մերկանալ* (378). (դարձվածք)= չապականել: 6.Զոչ կալ դադարման մարդկութեան *ի վերայ երկրի* (306). (դարձվածք)= երկրի վրա հանգիստ չլինել: 7.Մեծաւ իշխանութեամբ ջան եդեալ եւ *դայր բերել* զնոսա ի սահմանս աշխարհին իւրոյ (318. պատճ.): 8. Եւ *դայր դանել* զինքն ի վանքն իւր, որ կոչի Շուղր (360. պատճ.): 9.«Ո՞հայի յերկինք եւ *դայ դողալ* սմա» (362. պատճ.): 10. Եւ ոչ ասի սա իշապանն Սարգիս ասդուածուրացն՝ այն որ շանն *դայր երկրպագանել* (192). արտահայտությամբ պատճառական է, սեռով՝ ներգործական. շանն էր երկրպագում:

Չորրորդ: Անկախ գործածությամբ բազմաթիվ դրսևորումներ ունի. հանդես է գալիս եւ՛ առանձին՝ որպես դերբայական լրացում, ենթակա, սպորոգելի, եւ՛ որպես դերբայական դարձվածի կամ դերբայական նախադասության գերադաս անդամ: Բերենք անորոշով արտահայտված օրինակներ՝

ա) *Դերբայական անդամներ՝* 1. *Իմանալն* անկարելի է (24): 2. Վասն զի ահա այս է ժամանակ *ընդունելոյ:* 3. Յայնժամ հասուցանէին քաղաքացիքն առ ասպասալարն Բուրսուին ի Մօսլ քաղաք *գալ* օգնել նոցա (394) (վերջին կապակցությունը դերբայական դարձված է): 4. Տեսեալ թագաւորն հարցանէր պատճառս *չպալոյն:* 5. *Զմեռանիլն* խնդրէին (402): 6. Ճօսլինն *կոտորելով* պանէր զմիւս կողմն թուրք զօրացն (390):

բ) *Դերբայական դարձվածի գերադաս անդամներ՝* մեծ մասամբ հայցականով նպատակի եւ գործիականով ձեւի պարագաներ՝ 1. Գիր ծառայութեան գրուեալ մեզ հաստատուն որպէս զԴամասկացիքն՝ *հնազանդ լինել մեզ յաւիտեան եւ պալ անխափան զհարկն մեր* (28): 2. եկին առ մեզ ի Ռամլէէ եւ յԵրուսաղեմէ *աղաչել զթագաւորութիւնս մեր՝ ողորմութիւն գտանել ի մէնջ* (28): 3. Եւ յորժամ եկին իշխանքն Հայոց *հարցանել զնա* եւ *իմանալ վասն հրաշալի տեսլեանն եւ նշանին* եւ տեսին… (60): 4. Եւ գրեաց եւ ի վանորայսն առ հարսն գալ միաբան ամենայն կրօնաւորքն ի զօրս հաւատացելոց (90): 5. Իսկ զօրքն Երուսաղէմայ հպարտացեալ լինէին, յառաջացան *ի պատերազմ ելանել ի վերայ Թուրք զօրացն* (358): 6. Զայն օգնութեան հասուցանէր առ կոմսն Փռանգաց Ճօսլինն եւ Ճօփրէ *հասանել իւր յօգնութիւն:* 7. Ապա եթէ զՈրդոյ միայն հրատարակեմք զբարեբարութիւնն՝ *փախչելով ի բանէն՝* որ ասի յԱւեպարանն (186): 8. Եւ եպարքոս կոչէր զնա եւ ոչ անուն թագաւորի ասէր նմա, *մանուկ գոլով իբրեւ ամաց քսանից* (308):

գ) *Դերբայական նախադասություններ՝*

1.[Զմշկիկ թագաւորն] հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք եւ խնդրեաց զօրս յԱշոտոյ *գալ նմա յօգնականութիւն* (22). ենթական դրված է տրական հոլովով. օրինաչափ երեւույթ է, որը հայտնի է *տրականն անորոշի հետ* (dativus cum infinitivo) արտահայտությամբ, տե՛ս նաեւ [Սուլտանն] կոչէր զբերդապէրն *գալ իւր ի հնազանդութիւն* եւ *տիրանալ հայրենեաց իւրոց յաւիտեան* (220): 2. Եւ նորա առ զօրութեանն իւրոյ եւ բարձրավզութեանն հրամայեաց *ժողով լինել բազմութիւն զօրաց իւրոց զամենայն ազգն Թուրքաց,* ի Յունաց աշխարհէն մինչեւ յարեւելս զամենայն Կարմիան (380). ընդգծված կապակցություններում *բազմութիւն* եւ *ազգն* բառերը հայցական հոլովով ենթականեր են՝ գործածված *ժողով լինել* (հարադրական բայ) անորոշ դերբայ-սպորոգյալի պահանջով. սա էլ կոչվում է *հայցականն անորոշի հետ* (accusativus cum infinitivo): Այս երկու տեսակ դերբայական նախադասությունները Ե դարում տարածում ունեն, մանավանդ *տրականն անորոշի հետ* կառույցը, իսկ Ուռհայեցու երկում եզակի կիրառություններ են: 3. Եւ արարաք զսա ի պէտս սնափառութեանց՝ *որպէս կարծել ոմանց* (304): 4. Եւ այնպէս սրտաթափ եղեալ, *մինչեւ ի միում գիշերի թողուլ զարդաքին պարիսպն* (402): 5. Իսկ յորժամ մօտեցաւ՝ յարձակեցաւ ի վերայ սուլտանին եւ *հանել զերկու դանակն ի կօշկացն,* եւ որք տանէին զնա՝ փախեան (220): 3-րդ եւ 4-րդ նախադասություններում սրտադաս նախադասությունները դերբայական են, իսկ 5-րդում համադաս նախադասությունն է դերբայական: Ուռհայեցու երկում սրանք հազվադեպ կիրառություններ

են եւ շեղումներ չեն. այդպիսիք կան դասական եւ հետդասական շրջանի հեղինակների գործերում:

Դիտողություն._Մի օրինակում շփոթված են *առնել* եւ *առնուլ* դերբայները. դա հետեւյալն է. «Եւ յառաջ ժամանակաց թագաւորն խառնակեալ էր ընդ նմա մեղօք եւ վասն այնորիկ չարաբ հնարս *առնելոյ* զքաղաքն Ամիթ» (24): Առնել բայը դիմավոր ձեւով է գործածված՝ *չարաբ=չկարարեց, չարեց* (հնարներ), իսկ *առնելոյ*-ն առնելու իմաստով է՝ Ամիթ քաղաքն *առնելու* (հնարներ), այսինքն՝ Ամիթ քաղաքը գրավելու ձեռնարկումներ չկատարեց: Ելնելով *առնելոյ* անորոշի իմաստից՝ պետք է լիներ՝ առնուլ> *առնլոյ* եւ ոչ թե առնել> *առնելոյ* ձեւով: Բայց այստեղ մեկ ուրիշ հանգամանք եւս կա. գրաբարի *առնել* բայը միջին շրջանում դարձել է *անել*, որը չի հանդիպում Ուռհայեցու երկում, իսկ *առնուլ*-ը դարձել է *առնել*. գուցե հիշյալ օրինակում աշխարհաբարացման գործընթաց է տեղի ունենում, մանավանդ որ մեկ այլ օրինակում (էջ 370), հանդիպում է *առնլոյ* ձեւով. «Եւ այսպիսի գործս անթուելի եւ անպատմելի, զի հանապազ վասն զանձի *առնլոյ* անիրաւաբար չարչարանօք յաւեր եւ յապականութիւն դարձուցին զերկիր»:

Ուրեմն՝ *առնելոյ*|| *առնլոյ* զուգաձեւությունը ենթադրել է տալիս՝ 1)շփոթված են *առնել* եւ *առնուլ* բայերը, 2)տեղի է ունենում *առնուլ* բայի աշխարհաբարացման երեւույթ, որը կատարվում է բանավոր-խոսակցական լեզվի ազդեցությամբ՝ *առնուլ> առնելոյ> առնելու:* Նույն նախադասության մեջ խոսակցական-բարբառային ազդեցությամբ *Ամիդ*-ը դարձել է *Ամիթ:*

Այսպիսով՝ անորոշի վերաբերյալ տրված բնութագրումներից եւ բերված օրինակներից պարզվում է, որ *նրա գործառությունները գրաբարյան են՝ գրաբարին բնորոշ դրսեւորումներ,* մյուս կողմից՝ *-իլ* մասնիկով կիրառությունները եւ վերջին դիտողությամբ մասնակիորեն նշված *առնուլ> առնելոյ> առնելու* դիտարկումը հաստատում են ժամանակի կենդանի-խոսակցական-բարբառային լեզվի ազդեցության փաստը եւ ոչ միայն *միջին հայերենին, այլեւ աշխարհաբարին ձգտելու միտումը:* Համոզված ենք, որ անորոշ դերբայի անկախ, հարաբերականորեն անկախ, դարձվածային եւ ոճական կիրառությունները, օրինակելի համարվելով, իրենց ազդեցությունն են թողել միջնադարի պատմագիրների վրա:

Անցյալ դերբայ. գրաբարի չորս դերբայների գործառություններում ամենահաճախական կիրառվողը անցյալ դերբայն է. դրանում կարելի է համոզվել ոչ միայն ամբողջական երկերի ուսումնասիրություններից, այլեւ հենց ցանկացած էջը նայելուց: Դա պետք է բացատրել դերբայի արտահայտած իմաստային հարաբերություններով՝ վաղակատար, հարակատար, ներգործական, կրավորական, չեզոք իմաստներով, ինչպես նաեւ ձեւաբանական ու շարահյուսական ներունակ հնարավորություններով:

Անցյալ դերբայը հոլովվում է *Ո* հոլովիչով, եզակի եւ հոգնակի թվերով, ունի անկախ եւ հարաբերականորեն անկախ գործածություններ, որոնք Ուռհայեցու երկում լիարժեք դրսեւորումներ ունեն:

Անկախ գործածությունները բազմազան են:

Անցյալ դերբայով ձեւավորվում են դերբայական նախադասություններ, որոնք երեք տեսակ են՝

ա) Անցյալ դերբայը կատարում է սրտորոգյալի պաշտոն, որի ենթական դրվում է սեռական հոլովով՝ 1. **Սորա** *ազդ արարեալ* թագաւորին զնենգութիւն զօրացն (66): 2. **Նորա** *հանեալ* զպահապանս գիշերի (116): 3. **Սորա** [Վասլին] *պուեալ* զասն հազար դահեկան ի գինսն նորա (318): 4. Իսկ **նորա** *հաւատացեալ* սուտ չարախօսութեանն անօրէն եւ չար լեզուաց:

Այսպիսի անկախ նախադասությունները կարող են ունենալ երկրորդական կամ համադաս նախադասություններ, որոնք չեն խաթարում առաջինների անկախությունը: Օրինակ՝ 1.Եւ *տեսեալ* զնա **շինականացն,** որ փախուցեալ էին (18): 2.Իսկ **սորա**_անչափ *հպարտացեալ*՝ որ գործն իւր ոչ իմացաւ (98): 3.*Հասեալ* **նոցա ի** բերդն՝ որ կոչի Կապուտռու (116): 4.Եւ ապա **մեր** յառաջ *եկեալ* յայնժամ բազում ուրախութեամբ որպէս թէ յԱստուծոյ այս հրամայեցաւ ինձ՝ զայս այսպէս ի գիր հաւաքել (300):

բ) Անցյալ դերբայը զուգահեռաբար ունենում է դիմավոր բայով սրտորոգյալ, ենթական իր դիրքում մնում է անփոփոխ, սակայն դիմավոր բայը նրա հետ համաձայնում է թվով: Օրինակ՝ 1.Եւ *զայրացեալ* **բազմաց** եւ անողորմ գազանաբար *հարձակեալ* զմիմեանս *ուրէին* (6): 2.*Տեսեալ* **Վասակայ** *ասէր* (16): 3.Եւ *տեսեալ* զայն քաջին **Վասակայ,** ձայնիւ *գոչեաց* որպէս զառիւծ (18): 4.Եւ *եկեալ* **կնոջն** ի վերայ պարսպի քաղաքին, *ասէ* ցթագաւորն (24): 5.Իսկ **Ապլղարիպայ** *եկեալ* ի միտս իւր, *լայր* (36): 6.Եւ *տեսեալ* զայն **այլազգեացն՝** *ի փախուստ դարձան* (38): 7.Եւ *տեսեալ* **ամիրային** *Ապլիաճէի* եւ **զօրացն,** *զիւր հարձակեցան* մեծաւ ցասմամբ (38): 8.Եւ *լուեալ* զայս **սուլտանին՝** *լայր եւ ապաշաւէր* զկորուստն Տիօժենին (218): 9.Իսկ **նորա** *զերծեալ մտանէր* ի պատերազմ (100): 10.Եւ *եկեալ* **նոցա** *ընկալան* զմարտիրոսական մահն բարի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս (152): 11.Եւ **նորա** *զայրացեալ յարձակէր* ի վերայ Մարկոսին (196): 12.Եւ *լուեալ* Թուրք **զօրացն՝** զտեղի *առին* (116): 13.Եւ *տեսեալ* զայն **զօրաց** անօրինացն, *դարձան* միաբան ի պատերազմ ընդ Վրաց զօրացն (116): 14.Եւ այսպիսի փառաւորութեամբ *կացեալ* **Տէր Պետրոսին,** յաւելէր փառօք (116): 15.Եւ *լուեալ* զայս **զօրացն** Տաճկաց *դարձան* յաշխարհն իւրեանց (74): 16.Եւ *լուեալ* զայս **Պաղտրոյնն՝** [< Պաղտրին] *դարձաւ* յՈւռհա եւ *տայր* զՈւռհա ի միւս Պաղտրոյնն (294): 17.Զոր եւ **մեր** *ժողովեալ* զայն բազում հոգաբարձութեամբ. եւ *լսեցաք* յայլոց ոմանց պատուականաց (304): 18.Զորս եւ **մեր** *մնացեալ* այլոց ոմանց *թողաք* զայս քննել (306): 19.Եւ *տեսեալ* **արանց** իմաստնոց, *ասեն* (320): 20.**Սորա** *բռնեալ* զՊեմունդն առ իւր եւ *ասէր* (322): 21.*Տեսեալ* **նոցա** զանպատրաստութիւն զօրացն Փռանգաց, բախեալ զնոսա եւ միաբան *լցին* ի խանդակ քաղաքին (328): 22.Եւ **նորա** *զարհուրեալ ոչ իշխեաց զնալ* առ այլազգին (340): 23.Եւ **նորա** *լուեալ* զայս… *զայր հասանէր* ի սահմանս քաղաքին Խառնայ (340): 24.Եւ **նորա** *ապեալ* զառաջասացեալսն եւ *ասէր* ցիշխանն Հայոց (348): 25.Եւ *յարուցեալ* **ասպուածասպանին՝** *դարձաւ* ի տուն իւր (348): 26.Եւ *տեսեալ* **Թորոսի** *եկաց* դառնապէս (348): 27.*Լուեալ* **թագաւորին** Վրաց, *առաքեաց* զզօրս եւ զկամուրջն փլոյց (388): 28.Եւ *հասեալ* ի վերայ նոցա Վրաց **արքային՝** եւ սաստիկ կոտորածով դարձուցանէր զնոսա ի փախուստ (398):

Ինչպես նկատելի է բերված նախադասություններից, զուգահեռ գործածվող բայերը թվով համաձայնում են ենթականերին, իսկ եթե ենթական արտահայտված է դերանվամբ,

համաձայնում են նաեւ դեմքով *(եկեալ* **նոցա** *ընկալան.* **սորա** *բռնեալ ասէր.* **մեր** *ժողովեալ լսեցաք):* Նկատելի է մի հանգամանք եւս. գրքի սկզբից մինչեւ վերջը (հմմտ. էջ 5-405) գործածված են այսպիսի կառույցները, որ լայն տարածում ունեն դասական շրջանում: Սա նույնպես հաստատում է, որ Ուռհայեցին հավատարիմ է մնում գրաբարին:

գ) Գործածվելով տարբեր հոլովներով, եզակի եւ հոգնակի թվերով, բուն եւ փոխանվանական կիրառություններով, անորոշ եւ որոշյալ առումներով՝ տարբեր պաշտոններ է կատարում թե՛ առանձին եւ թե՛ դերբայական դարձվածի կիրառություններով[6]:

Օրինակ՝ 1. Արդ ահա այսմ ամենայնի պարտ է կատարիլ եւ լինել, վասն զի երեւեսցին *ճշմարտեալքն*) 314. ենթակա): 2. Եւ նորա սրեալ *զառաջաւանացեալսն* (348. ուղիղ խնդիր): 3. Եւ *լուեալ* թագաւորն՝ ոչ կամեցաւ *[զգայն Գագկայ]* (174. (ստորոգյալ. ԴԴ ուղիղ խնդիր): 4. Եւ Տուկիծն *[բռնակալեալ ի վերայ թագաւորութեանն Յունաց]* եւ զամենայն անհաւատս ածէր ի հաւանութիւնս (140. ձեւի պարագա): 5. Սա *[կացեալ յաթոռ հայրապետութեան զամս քառասուն եւ երկու]* եւ յաւելաւ առ հարս իւր (ն.գ. ժամանակի պարագա): 6. Եւ *[իջեալ ի վերայ հոչակաւոր քաղաքին], որ կոչի Նիկիա, եւ [անդրի խորհրդովք խելագարեալ]* խորհէր *[անցանել առնուլ զքաղաքն Կոստանդնուպօլիս]*... եւ *[մոլորական բնութեամբ միտ եդեալ [առնուլ զանընմբռնելի քաղաքն].* եւ *[կացեալ անդ զաւուրս ինչ],* եւ ոչ կայր կարողութիւն առնել ինչ. 260) (1-ին՝ ձեւի պ., 2-րդ՝ ձեւի պ., 3-րդ՝ ուղիղ խնդ., 4-րդ՝ ձեւի պ., որի ներսում՝ կողմնակի նպ. պ., 5-րդ՝ ժամ. պ.): 7. Ամիրայն Պարսից, որ ասի Օշէն, յապականութիւն դարձոյց զբազում գաւառս, եւ *[արեան ջաղխիս* «արյունահեղություն» *արարեալ զդասս հաւատացելոցն Քրիստոսի]* (200 ձեւի պ., որի ներսում՝ հատկացուցիչ՝ հոգնակի սեռականով): 8. Իսկ յայսմ աւուրքս արք քառասունք *եղեն միաբանեալք* ի խորհուրդն Յուդայի (280. ստորոգյալի մաս): 9. Եւ *բարձեալ* տանէին զնա . 284) ձեւի պ.): 10.Այսպիսի օրինակաւ մեռաւ քաջ զօրականն եւ մեծ *հաւատացեալն* Գրիգոր որդի Վասակայ (288. որոշիչ): 11.*Դարձեալ ուրացեալք լինէին* (290. ձեւի պ., ստորոգյալի մաս): 12.Եւ *[լուեալ զայս՝]* ցրուեցան զօրք նորա (392. ժամ.պ.):

դ)Անցյալ դերբայի անկախ գործածությամբ ձեւավորվում են դերբայական նախադասություններ, որոնց ենթակաները ուղղական հոլովով են: Այդպիսի կառույցները հաճախակի են հանդիպում. նախորդ հեղինակները նույնպես ունեն այդպիսիք, սակայն Ուռհայեցու երկում այնքան հաճախական են, որ հեղինակային ոճի պատկեր ունեն եւ թեք հոլովով ենթակա ունեցող կառույցների համեմատությամբ անսահման շատ են, եւ դարձյալ գրաբար են: Ուշագրավ է այն իրողությունը, որ նմանատիպ նախադասությունները գործածվում են եւ՛ առանձին, եւ՛ լինում են բարդ նախադասությունների բաղադրիչ, բայց ոչ թե կախյալ դերբայական դարձված:

Օրինակ՝ 1.*Եւ դղրդեալ* **քաղաքն** Անի՝ ելանել ի պատերազմ ընդ Աշոտոյ քառասուն հազար հեծելակաց եւ քսան հազար ձիաւորաց (14. նախադասության բաղադրիչ է անորոշով նպատակի պարագա ԴԴ-ը): 2.Եւ կարի յոյժ երեւելի *երեւեալ* **այրս** այս Վասիլ եղբայրն Կոստանդէ (36): 3.Ապաշաւէր զկորուստն Տիօժէնին. եւ *ասացեալ* **սուլթանն** եթէ՝ «Զունին Ասդուած ազգն Հռոմոց» (220): 4.Եւ **ոչ որ** *լուեալ* այնպիսի հրաշալի տե-

6 Իրարից տարբերելու համար, ընդգծումներից բացի, դարձվածները տրվում են միջակ փակագծերում, փոքր փակագծերում նշվում են պաշտոնները:

սիլ. եւ ասացին իմաստունք եւ հանճարեղք (330): 5.Յայսմ ամի *զօրաժողով եղեալ* **ազգն** Պարսից երկոտասան հազար եւ *անցեալ* ընդ Տօրսս լեառն ի գաւառն, որ կոչի Անաւարգա, եւ արար աւար զամենայն երկիրն Թորոսի՝ որդւոյ Ռուբենայ (332. դերբայական են գլխավորը եւ նրան համադասը): 6.Եւ յայնժամ խորհեցաւ վարս առաքինութեան սրանալ, զի թերեւս ապաշխարութեամբ մաքրել զարիւնն, զոր հեղաւ տարապարտուց. եւ հինգ ամ միայն *կալեալ* զաթոռ թագաւորութեանն Յունաց (34. համադաս դերբայական նախադասություն է, սրտորոգյալը գեղչված է. 2-րդ նախադասությունը եւս դերբայական է՝ ձեւավորված անորոշ դերբայով): 7.Յայսմ ամի զօրաժողով արար **սուլտանն** Տմշգայ՝ որ ասի Դդուշ. եւ սա բազում զօրօք կամեցաւ ելանել ի յաշխարհն Պարսից ի յառնուլ զաթոռ թագաւորութեանն եղբօր իւրոյ Մելեք շահին՝ եւ *եկեալ* յԱնտիոք քաղաք. եւ *ելեալ* **ամիրայն** յերկրպագութիւն սուլտանին (262. տարբեր կառուցվածքներ են): 8.Եւ յաւուր միում **Ուտայրն** զՇէպլն ի ճաշ հրաւիրեաց. եւ *հանեալ* զնա արտաքոյ քաղաքին, որ կոչի Արճիճի վանք, ուր քարէ սիւն կայ (66. դերբայական է 2-րդ նախադասությունը, որի ենթական նախորդ նախադասության մեջ է): 9.Եւ յայնժամ *ելեալ* **Գագիկ** յերեսաց թագաւորին, եւ մեծաւ փառաւորութեամբ գնացին յաշխարհն իւրեանց (194): 10.Եւ կամ որպէս լալով ասացից՝ զանցումն իշխանացն եւ քահանայիցն, **որք** անթաղք եւ կերակուր զգաստաց *լեալ*, եւ փառաւոր կանայք հանդերձ տղայօքն վարեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից յանգին ծառայութիւն (112. սրտորադաս դերբայական նախադասություն):

Հարաբերականորեն անկախ կիրառությունները ներառում են անցյալ դերբայով ձեւավորված ոճական, դարձվածքային, նախդիրներով եւ նախադրություններով արտահայտությունները, բաղադրյալ ժամանակաձեւերի կազմությունները (վերջիններս, ընդունված է ասել, ընդգծում են դերբայի կախյալ վիճակը): Այս դերբայի անկախ կիրառությունների համեմատությամբ նշված արտահայտություններն ու կառույցները լայն տարածում չունեն հավասարապես:

Բերենք որոշ օրինակներ՝

1)*Ոճական արտահայտություններ,* որոնք կազմվում են հոմանիշ բայերով, որոնցից անցյալ դերբայը իմաստային երանգ, սաստկացում է հաղորդում զուգադիր բային, ուշադրություն գրավում երեւույթի, գործողության նկատմամբ:

Այսպես՝ *Առեալ ընկալաւ* (22), *ելեալ գնաց* (26), *դիմեալ խաղացաք* (26), *դիմեալ խաղալով գնացաք* (26), *անուանեալ կոչի* (26), *կոծ առեալ լայր* (34), *նստեալ դադարէր* (36), *լռեալ դադարեցաք* (300), *փլեալ կործանեցան* (330), կրկնով՝ *այրեալ խորովէին* (380), *յարուցեալ* վաղվաղակի եւ *գայր* (396), *ելեալ գնացին* (394), *դիգացեալ բարձրանայր* (366), *հարեալ գարկանէր* (344), *շարժեալ գային* (18) եւ այլն:

Այսպիսի արտահայտությունները ձեւավորվում են զուգաբայական հարադրություններից, որոնք բաղադրիչ մասերի ու նրանց միջեւ եղած իմաստային կապի բնույթով տարբեր խմբավորումների են ենթարկվում[7]: Տրված ոճական արտահայտությունների սկզբնաձեւերը հետեւյալ պատկերը կունենան՝ *առնուլ ընդունել, ելանել գնալ, կոծ առնել լալ (առեալ*-ի փոխարեն պետք է լիներ *արարեալ,* որովհետեւ *կոծ առնուլ* հարադրություն չկա, *կոծ առնել* «կոծ անել» կա. ուրեմն աշխարհաբարացման խնդիրն է գործում), *նստել*

7 Հմմտ. **Ա.Ա.Աբրահամյան,** Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 190-198:

դադարել, լռել դադարել, փլչել կործանել, այրել խորովել, յառնել գնալ, յառնել անցանել, յառնել գալ, դիզել բարձրանալ, հարել զարկանել, շարժել գալ:

2)*Անցյալ դերբայը ձեւաբանական արժեք ունի* խոնարհման համակարգում. *եմ* օժանդակ բայի հետ կազմում է վերլուծական (բաղադրյալ) ժամանակներ, որոնցում դերբայը կախյալ դիրքում է, իսկ եթե հոգնակի թվով սրոորոգելի է, նշանակում է հարաբերականորեն անկախ դիրքում է: Վերլուծական կազմություններով գործածվելիս ունենում են ուղղական եւ սեռական հոլովներով ենթականեր, ըստ որում սեռական հոլովով ենթակայի հետ վերլուծական բայաձեւը գործածվում է միայն եզակի երրորդ դեմքով. այսպիսի կիրառությունները Ե դարում հեղինակների մոտ տարածում ունեն, Ուռհայեցու երկում սակավաթիվ են:

Օրինակ՝ 1.Զայս բազում անգամ *լուեալ է* **մեր** ի բազմաց (112): 2.Նեղով *հարեալ էին* գնա ի գլուխն եւ *պապառեալ էին* զպողովատ սաղաւարտն նորա, եւ *անցեալ էր* **նեփին** գթափ, ուր եւ մեռաւ իսկ (262. *անցեալ էր* եզակի 3-րդ դեմքի բայն ունի սեռականով ենթակա): 3.Իսկ **թագաւորն** Գագիկ *նմանեալ էր* շնորհաց նոցա (194): 4.Եւ յառաջ ժամանակաց զայս ամենայն *լուեալ էր* Գագիկ **արքայ** Հայոց եւ *էր* յոյժ *զայրացեալ* ցասմամբ (և.պ.): 5.Եւ *էր* յայնմ ժամու *անհոգացեալ* **քաղաքն** ի նմանէ (350): 6.Վասն զի *չեւ* եւս *էր լեալ* **սկիզբն** մօրուացն (360)՝ երեսին դեռ աղվամազ չէր բուսել: 7.Զայս ճեմարանս *կանգնեալ էր* Տուղրիլ **սուլթանն** Պարսից եղբայրն Աբասլանայ, *շինեալ էր* գնա զարմանալի եւ հրաշալի գործարանօք (382): 8.Եւ ազատեցաւ ի ծառայութենէ թագաւորաբնակ քաղաքն Անի, **որ** *կացեալ էր* ի ծառայութիւն զամս վաթսուն (392): 9.Զոր *արարեալ էր* **Վասիլն**... զոր **Վասիլ** լի իսկ *արարեալ էր* իշխանօքն Յունաց (64): 10.Իսկ յառաջագոյն *լուեալ էր* **թագաւորն** վասն Հայոց վարդապետացն՝ եթէ յաղթողք եւ կորովիք են զրոց պատուիրանաց (50): 11.Իմացաւ, որ սուտ *էին* եւ *մոլորեալք* (50. սրոորոգելի է. հարաբերականորեն անկախ է):

3) Անցյալ դերբայով եւ օժանդակ բայի դերով գործածվող *լինել, ունել* եւ *կալ* բայերով նույնպես կազմվում են վերլուծական ձեւեր, որոնք գերազանցապես կրավորական իմաստ են արտահայտում[8]: Եթե նշում ենք, որ դերբայը օժանդակ բայի դերով բայերի հետ է գործածվում, նշանակում է կախյալ հարաբերություն ունի, իսկ եթե դերբայը հոգնակի թվով է, պարզ է, որ հարաբերականորեն անկախ է: Այդպիսի կառույցները քննվող երկում բավականին տարածում ունեն:

Օրինակ՝ 1. Կարի յոյժ *վիրաւորեալ լինէր* հզօրն Ապլղարիպն (36): 2. Ինքն հոգւովն *դանջեալ եղեւ* ի բանսարկուէն եւ ի վիհն կորստեան յաւիտենից դանջանացն *մատնեալ լինէր* (98): 3. Արեամբ *արբեալ եղեն* ամենայն ազգ զազանաց (152): 4. Ինքն ի նոյն ժամայն *սատակեալ լինէր* (392): 5. *Սատակեալ լինէր* Սուլիման ամիրայն արեւելից (346): 6. *Սատակեալ լինէր* չար զազանն այն (332): 7. Յաւուր յայնմիկ *թափեալ եղեւ* քաղաքն Ուռհա ի Թուրքաց (352): 8.Ամյամէ *անկեալ* եւ *գլորեալ լինէր* զօրութիւն զօրաց հաւատացելոցն (300): 9.Եւ *ապրեալ եղեւ* զաւուրս երիս (360): 10.Յայսմ ամի յամսեանն Օգոստոս *անկեալ եղեւ* կրակ յերկնից եւ այրեաց զաւագ ճեմարանն (382): 11.Աշխատութեամբ Ճօսլինին *եկեալ եղեւ* Պաղտիին ի գերութենէն (392): 12.Եւ արդ ահա *հաճեալ ու-*

8 Տես **Ա.Ա.Աբրահամյան,** Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 221-223:

նիմ եւ զայս ինչ ի քէն (34): 13.Բազում զօրօք զցամաքն *կալեալ ունէր* (394): 14.Իշխանն Հայոց Լեւոն *վառեալ ունէր* զզօրսն Հայոց (374): 15.Եւ ահա այս նշան ձեզ իմոյ վրանին, յորդան կարմիր է, եւ ի վերայ բլրին *հարեալ կայ* (36): 16.Ապլղարիպ *թուլացեալ կայր* ի մէջ անպառախիտ դրախտացն Հերայ (38): 17.Ի նմա *ծածկեալ կան* ասպուածեղէնքն (76): 18.Նա *բանակեալ կայր* ի վերայ քաղաքին (340): 19.Պալակն *իջեալ կայր* ութ հարիւր ձիաւորով ի տեղի մի գեղագնաց (384): 20.Եւ զօրօք իւրովք *ամրացեալ կայր* ի նմա (և.գ.): 21.Տարան զթագաւորն եւ զքուրորդին իւր ի Խարբերդ եւ երկաթի կապանօք եդին ի խոր բանտին, ուր *եղեալ կայր* Ճօսլին եւ Կալարանն (386): 22.Եւ ի ձայնէ գազանացեալ զօրացն Հայոց փախստականքն ոչ կարէին փախչել, այլ *կային յիմարեալք* եւ *մատնեալք* ի ձեռս սրոյ (94): 23.Իսկ յայսմ աւուրքս արք քառասունք *եղեն միաբանեալք* ի խորհուրդն Յուդայի եւ ի գիշերի գնացին առ կոմսն Պաղտինն… եւ միաբանեցին զնա ի չար խորհուրդս իւրեանց եւ խոստացան տալ զՈւռհա ի ձեռս նորա (280): Հոգնակի ձեւերն այլեւս կախյալ հարաբերությամբ չեն:

Անցյալ դերբայը, լինելով սպասարկու բառերի խնդիրը, քերականորեն կախյալ դիրք է ունենում, սակայն այդպիսի կապակցությունները չեն հավասարվում վերլուծական կառույցներին (դերբայ+ օժանդակ բայ)՝ բառական ինչ-որ անկախության պատճառով, որի համար հարաբերականորեն անկախ դիրք ենք վերագրում, օրինակ՝ Դանիշմանն մեծ ամիրայն Հռոմոց աշխարհին, որ լեալ էր յազգէն Հայոց, այր բարի եւ շինող աշխարհի եւ էր յոյժ ողորմած *ի վերայ հաւատացելոցն* Քրիստոսի (324):

Այսպիսով պարզվում է, որ Ուռհայեցու երկում անցյալ դերբայը բազմաթիվ գործառություններ է դրսեւորում, ակտիվ դեր ունի խոսքի մեջ, իսկ բերված փաստերը հաստատում են դրանց կապը դասական շրջանի համապատասխան իրողությունների հետ, թեեւ որոշ կառույցների հարցում կան մասնակի տարբերություններ՝ հաճախական կամ սահմանափակ կիրառությունների իմաստով:

Անորոշ եւ անցյալ դերբայները ծանրակշիռ դեր ունեն խոսքի, նախադասության կառուցվածքներում՝ նրանց լեզվական բազմաթիվ իրողությունների պատմական զարգացումներն ու փոփոխությունները ցույց տալու եւ մեկնաբանելու խնդրում: Երբեմն այս երկու դերբայներով ձեւավորված կառույցներով շատ ծավալուն նախադասություններ են հանդիպում (էջ 304-ում 16 տող է զբաղեցնում, էջ 196, 318, 328 եւ այլն:

Ապառնի դերբայ

Գրաբարի ապառնի դերբայը կազմվում է *-ոց* եւ *-ի* մասնիկներով, որոնք ավելանում են անորոշ դերբային, ինչպես՝ *սիրել- սիրելոց, սիրելի. ընծայել- ընծայելոց, ընծայելի: -Ի* մասնիկով ձեւերն ունենում են հոգնակի թիվ՝ *ք* հոգնակերտով. *սիրելի- սիրելիք, ընծայելի- ընծայելիք:* Դերբայի այդ երկու ձեւերը տարբեր հատկանիշներ ունեն:

-Ոց մասնիկով ապառնի դերբայը միայն մեկ հատկանիշ ունի. կախյալ է, նրանով կազմվում են վերլուծական ձեւեր՝ *եմ* բայի ներկա, անցյալ անկատար, առաջին ապառնի ժամանակներով:

Ուռհայեցու գրքում ապառնի ժամանակի իմաստը գերազանցապես արտահայտված է ստորադասական եղանակի երկրորդ ապառնիով, իսկ —*ոց* մասնիկով ապառնին հազվադեպ է կիրառված:

Օրինակ՝ 1.Եւ ահա յայսմ ամի լուսաւորքդ խաւարեցան եւ ամենայն արարած, վասն զի յայսմ հետէ ամենայն ազգք եկեղեցւոյ Քրիստոսի ի խաւար *շրջելոց են* (76) (= դեգերելու են խավարի մեջ): 2.Յորժամ գիտաց, եթէ *մեռանելոց էր*, յաղագս որդեաց արար զայս (372) (=երբ համոզվեց, որ մեռնելու է…): 3.Լուսաւոր առնէր զամենայն մարդ, որ *գալոց էր* (176):

Սակավ հանդիպող այսպիսի օրինակները կարծել էին տալիս, թե հեղինակը հակում չունի գործածելու այդպիսի ձեւերը: Սակայն տարօրինակ բան է կատարվում. երկու էջում (78, 80) տեղի է ունենում այդպիսի բայերի կուտակում, որոնք գործածվում են մի ծավալուն ուղղակի խոսքում, ըստ երեւույթին, հենց այդ ուղղակի խոսքի բնագրային թելադրանքով են պայմանավորված —*ոց մասնիկով դերբայ+ օժանդակ բայ* վերլուծական կառույցով բայաձեւերի շռայլ գործածությունները: Նշենք միայն բայաձեւերը. էջ 78-ում՝ *լինելոց է, լինելոց են*, դարձյալ *լինելոց են, փակելոց են, ապականելոց է*, էջ 80-ում՝ *լինելոց է, լինելոց են, վիրաւորելոց է, վճարելոց է, լսելոց է*, դարձյալ *լինելոց է, բառնալոց է:*

-Ոց մասնիկով ապառնի դերբայով կազմությունների գործածությունը գրաբարում տարածված երեւույթ է, իսկ թե ինչո՞ւ Ուռհայեցու երկում հազվադեպ են կիրառված դրանք, անշուշտ, դրա համար կան պատճառներ, որոնց բացատրությունները կապվում են եղանակային ձեւերի բնութագրման, պատմական ժամանակներում նրանց կրած փոփոխություններին, հատկապես որոշ բայաձեւերի՝ այլ բայաձեւերի իմաստով գործածվելու հանգամանքին, ժամանակային իմաստների փոխանցումներին:

-Ի մասնիկով ապառնի դերբայը անկախ գործածություն ունի. հոլովվում է ո-*ա* խառն հոլովմամբ, եզակի եւ հոգնակի թվերով՝ կատարելով ստորոգելիի եւ նախադասության տարբեր անդամների պաշտոններ:

Օրինակ՝ 1. Այս *իմանալի է*, այսպէս *խոստովանելի է*, առ մեզ *պաշտելի* եւ *երկրպագալի* [է] (176), *լսելի* լինէր, *լսելի* իսկ լինէր (362. ստորոգելիներ): 2.Վասն զի եւ այսքան յաղագս Հոգւոյն Սրբոյ *իմանալեաւ* աւանդեսցուք (176), Արդ սա ի ժամ մահուանն իւրոյ գործեաց գործ զարմանալի, որ անլսելի էր *լսելեաց* (372. խնդիրներ). իմանալեաւ՝ *իմանալի* դերբայի եզակի գործիական՝ միջոցի իմաստով. *լսելեաց՝ լսելիք* հոգնակի ձեւի տրական հոլովն է՝ հանգման իմաստով:

Եզրակացություն՝

1.*-Ոց* մասնիկով ապառնի դերբայական ձեւերը սահմանափակ կիրառություն ունեն, քանի որ ապառնիի իմաստի արտահայտման եղանակային այլ ձեւեր նույնպես գործածվում են զուգահեռաբար, որոնք քննվող երկում բավականին տարածված են, եւ հասկանալի է, որ շարունակվող զարգացումների ընթացքում մեկը, լինելով կենսունակ, հաղթում է եւ շարունակում գործել, մյուսը, իր տեղը զիջելով, դուրս է մնում գործածությունից. այդպես է —*ոց* մասնիկով ապառնին:

2.*-Ի* մասնիկով ապառնին կենսունակ է, գործածություններ ունի, սակայն դրա հետ այլ երեւույթ է տեղի ունենում. բերված օրինակներից նկատելի է, որ նրանցում եղած բայական ապառնիի իմաստը վերաճում է անվանական՝ առարկայական եւ որակական իմաստների, այսինքն՝ ասպիճանաբար խոսքիմասային նոր իմաստներ են առաջանում, եւ հետեւանքը լինում է այն, որ հին ապառնի դերբայի —*ի*-ով ձեւերը վերածվում են ածականների, *-իք*-ով ձեւերը՝ գոյականների (հմմտ.՝ ըմպելի, ըմպելիք):

3. Ուռհայեցու երկից ընտրված օրինակները նշված պատմական անցումների ընթացքն արձանագրող եւ հաստատող լավագույն հիմնավոր փաստեր են:

Ենթակայական դերբայ

Ենթակայականը անկախ դերբայ է, հոլովվում է *ի-ա* վերջադրական հոլովմամբ, գործածվում է անորոշ եւ որոշյալ առումներով, եզակի եւ հոգնակի թվերով, գոյականներին հատուկ պաշտոններով, կիրառական սահմանափակություն չունի, նրանով եղանակային ձեւեր չեն կազմվում, երբեմն նույն բառն ունենում է վերջավորության տարբեր գրություններ՝ *ող* եւ *օղ*. անհեստեւողականությունը գուցե գրիչների ձեռքի գործն է:

Օրինակ՝ 1. Եւ թագաւորն առեալ ընկալաւ զնա եւ յոյժ մեծարեաց զթուղթն եւ *զբերողն*... եւ տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց եւ այր *պատերազմողս* իբրեւ տասն հազար (22. ուղիղ խնդիրներ. *այր*-ը նյութական արժեքով չէ): 2. Մեռան բազում *պատերազմողք* (36) (ենթակա): 3. *Յանկացող* է մարտիրոսական մահուն (90. ստորոգելի): 4. Զոր ինչ եւ հարցանիցեն, բայց ի պատեհ եւ ի *դիպող* ժամու (314), Զօրք *պատերազմօղք* ընդ նմա տասն բիւր (306), այր բարի եւ *շինող* աշխարհի (324, 252), չարաշունչ եւ դառն *որոճող* համբաւ չարութեան (356. որոշիչներ): 5. Սատակեաց *զգործողսն* չարեաց (364) (ուղիղ խնդիր): 6. Ամենայն *լսողքն* զարմանային (346. ենթակա): 7. Արդ ի յաւուրս Թ-որոսի էին *սպանողքն* Գագկայ արքային Հայոց ի բերդն, որ անուանեալ կոչի Կնդռոսկաիս (346), սա եղեալ *ընդունող* ազգին Հայոց (378) (ստորոգելիներ): 8. Եւ իբրեւ զնաց *սպանողն* եւ եղեւ աներեւոյթ (348), Եւ զամենայն ճանապարհս չարեաց սիրէին, բարեաց եւ ամենայն երախտեաց *մոռացողք* (370. ենթականեր): 9. [Իշխանք եւ դատաւորք] մեծարեն զմատնիչսն եւ զգողսն, յափշտակեն անիրաւաբար *զաշխատողաց* զինչսն (78. հոգնակի սեռականը հատկացուցիչ է):

Գրաբարում ենթակայական դերբայի իմաստն արտահայտող այլ միջոցներ եւսկան: Ա.Աբրահամյանը ներկայացնում է այդ միջոցները, որոնցից են «-*Իչ* մասնիկով կազմվող բայանվանական ձեւերը, որոնք հնագույն դերբայական ձեւեր են եղել, սակայն գործածվում են ածականի եւ մասամբ գոյականի իմաստով»[9]:

Ուռհայեցին եւս —*իչ* մասնիկով անունները գործածում է ենթակայական դերբայի իմաստով:

Օրինակ՝ Եւ ահա յայսմ ի ժամանակիս բանաւոր ոչխարքն զգեցան զբնութիւն շանց եւ առին զսիրտ գազանաց եւ համարձակեցան հաջել յերեսս հովուացն եւ հայրապետացն. հարք ատեցին զծնունդս իւրեանց, որդիք *հայհոյիչք* եւ *չարչարիչք* ծնողաց իւրեանց (246). իմաստը հանգում է նրան, որ հայրերը ատեցին իրենց երեխաներին, իսկ որդիները [դարձան] իրենց ծնողներին հայհոյողներ (անարգողներ) եւ տանջողներ: Զի թուլամորթ էր եւ տկար եւ չարաբարոյ եւ կարի *հայհոյիչ* ուղղափառ հաւատոյ:

Համեմատության եզր ընդունելով դասական շրջանի գրաբարը՝ դերբայների բնութագրությունից հանգում ենք երկու էական եզրակացության՝

1.Բոլոր չորս դերբայների գործառությունները գրաբարյան են, եւ 5-6 դարերի ժամանակային տարբերությունները գործածությունների բնույթի անջրպետումներ չեն առաջացրել, բառագործածությունների հաճախականության իմաստով, ձեւաբանական եւ շա-

9 Տե՛ս **Ա.Ա.Աբրահամյան,** նշվ. ձեռն., էջ 161-162:

բահյուսական հատկանիշներով ունեն ընդգծված ընդհանրություններ. չորս դերբայներն իրենց հոլովման ձեւերով, հոդառությամբ, շարահյուսական կիրառություններով, անցյալ եւ ապառնի դերբայները վերլուծական կազմություններով, անցյալ եւ անորոշ դերբայները ստորոգյալների դերով եւ թեք հոլովներով ենթակաների ձեւավորումով եւ այլն համահունչ են դասականի կիրառություններին:

2. Չէր կարող պատահել, որ դարերի ընթացքում փոփոխություններ չլինեին, եւ տարբերություններ չառաջանային, այդպիսիք նույնպես արձանագրվում են. տարածվում են —*իլ* մասնիկով անորոշի կազմությունները, անցյալ դերբայով՝ ոչ թեք հոլովով ենթականերով, դերբայական նախադասությունները, վերանում են հայցականով ենթակա ունեցող կառույցները, սահմանափակվում են տրական հոլովով ենթակայով նախադասությունները եւ -*ոց* մասնիկով ապառնի դերբայով կազմված եղանակային ձեւերը՝ զուգահեռաբար ապառնիի իմաստ արտահայտող բայաձեւերի ակտիվության պատճառով: